և ազգի ազգի մեքենայիւք ի չինուածս. և ի մեծացուցանել զքաղաքն հատանելով զլերինս, և զայլ սքանչելի յօրինուածս առնելով քարամբք ի ծովու և ի ցամաքի ըստ հնարաւորութեանն։ (Հ. Անտոն Իւչգարտաշեան առ Մելգոնեան, 1769 Յուլիս 9 [Թրիեստ])։

ՍՆԱ.

Յուլիսի ամսեանն ախըլցըխոյ մեծ վրդովմունք էղև էշմիածնայ մէկ երկու վարդապետ էկել էին ըստամպօլու ֆէրման էին հանել 11 քէսայ ըստակ փաշային տըուին էկէղեցիք փակեցին ախըլցըխացի պողոս վարդապետն յօհաննէս վարդապետն կօրեցի տէր ըստէփանն տէր յակոբն այս Գ կարգաւորն բոնութեամբ տարան էշմիածին։ 5 պատրի կար նոքա ալ քըշեցին նարիմանու քօշն պարտէզ անուն գիւղ մի կայ այն տեղն մինչ թարըքիս դահայ այնպէս կեցել են պատրոցն գիրն այս գրիս հետն դրի ըստամպօլ ղրկեցի... թէ իմանաս անցեալ տարին մեր քաղաքին կողմանէ ալ կար յունան մի կա էշմիածին նա էկաւ որ պիտիր խառնակութիւն անէր։ (Ղուկաս աղայէկ Գրիգորեան առ Հ. Պօղոս, 1769 օգոստ. 13. Էրզրում)։

ՍՆԲ.

Ի յօգոստոսի 22, երևեցաւ գիսաւոր աստղ մի երկայնատուտ ձգեալ յարևելից յարևմուտս՝ առ հայկ համաստեղութեամբ. որ և ունի ընթացս յարևմտից յարևելս իբր զմոլորակաց միշտ ի խոնարհ առ հարաւակողմն խոտորելով. և ոչ ունի զպայծառութիւն. այլ թխագոյն երևի։ (Հ. Զաքարիա Ա. առ Մելգոնեան, 1769 սեպտ. 14. [Կ. Պոլիս])։

ՍՆԳ.

Ի կողմանէ պատերազմին զայս նորոգ լուր լուաք... թէ մոսգովն նախ առեալ է զհոդին և գերեալ զամենայն ժողովուրդն որ ի նմա, և զամենայն հայս. ապա և ազգն թուրքաց յօգոստոսի 15 առաջնորդութեամբ լէհին զերիս աւուրս զայնպիսի մեծ մարտ տուեալ է մոսգովին, մինչ զի և ոչ վեց անձինք կարացեալ են փախչիլ ի պատերազմէ...։ Դարձեալ աղաչայքն ասեն հաստատելով, թէ կայսրն ունի զմեծ պատրաստութիւն փոյթ ընդ փոյթ մարտի, բայց չգիտեն, թէ յո՞յր վերայ կամի արձակիլ. արդեօ՞ք ի վերայ տաճկին, թէ ի վերայ մոսգովին։ (Հ. Անտոն Իւչգարտաշեան առ Մելգոնեան, հոկտ. 6, 1769. [Պաչպաղով?])։

ՍՆԴ.

Զգրքատունն սկսաք չինել, և է մերձ յեզերիլ, և այն ծախիւք հասարակութեան։ (Մելգոնեան առ Հ. Միք. Զամչ. 1769 Նոյեմբ. 18. [Ս. Ղազար])։

ՍՆԵ.

Վասն քաղաքին մաշկադու ծանիր, զի չունէր ինչ պատուականութիւն առ ի ծանուցանել եղբայրութեանդ։ Բնակիչքն են արաբացիք, բայց ոչ բոնաւորք։ Շինուածք տանցն այնպէս բաղդատին չինուածոցն պասրայու, որպէս փարախ ոչխարաց մեծամեծ ապարանից։ Վասն տօթոյ քաղաքին այսչափ ինչ ծանիր, զի յաւուրս յայսոսիկ ի բուն ձմերան մարդիկ մերկ շրջէին ի քաղաքին. և մեք ևս նեղէաք ի տօթոյն յոյժ։ Իսկ յամարան որպէս պատմեն որք միանգամ զփորձ